Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/16 ծածկագրով «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանությունը կոռոզիայից» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25.03.2021թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Ա. Չավուշյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Հարությունյան
Ս. Թորոսյան
Վ. Առաքելյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան
Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Ադամյան

1. Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ա. Չավուշյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 25.03.2021թ., ժամը 11:00-ին:

գ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	<<ԱՐՍԷԱ>> Գիտա-արտադրական ՍՊԸ	7 000 000	6 750 000	-	6 750 000

դ) Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ե) Մասնակցի հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա. Չավուշյան)

2.1 Հիմք ընդունելով մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<ԱՐՍԷԱ>> Գիտա-արտադրական ՍՊԸ	բավարար

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց <<ԱՐՍԷԱ>> Գիտա-արտադրական ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Չավուշյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունած որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<ԱՐՍԷԱ>> Գիտա-արտադրական ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Չավուշյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահող՝ ---------- Ա. Չավուշյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ս. Թորոսյան

---------- Վ. Առաքելյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան